

գրուեցան: Այստեղ 1699ին, Փետրուարին, Առաջաւորաց պահոց մէջ ծնաւ իրենց անդրա-  
նիկ որդին, որ եւ Ս. Սարգսի տօնին շաբաթ  
օրը մկրտուեցաւ, գրոշմուեցաւ եւ կոչուեցաւ  
Սարգիս: Ծնողքն անմիջապէս Կ.Պոլիս դարձան,  
ուր մանուկն Սարգիս զարգացաւ օրըստօրէ, եւ  
յանձնուեցաւ երիցու մը յաշակերտութիւն:  
Սարգիս քիչ ատենէն Սաղմոս, Կտակարան,  
Ժամագիրք եւ Շարական սկսաւ կարդալ եւ  
եկեղեցւոյ մէջ դպրութիւն ընել:

Ծննդեան եւ պաշտաման պարագաներէն  
առեալ՝ Սարգիս յետոյ Սարգիս (կամ Սա-  
ռաֆեան), Ալեքսանդր, Ալեքսանդրեան, Բէ-  
լեան, Բէլեան, Կոստանդնուպօլսեցի, եւ Կե-  
սարեան, մականուններն առաւ: Պէտք չէ շփո-  
թել մեր Սարգիսը, միւս Սարգիս Վ. Կոստանդ-  
նուպօլսեցւոյ հետ, որ կը յիշուի ի յիշատակա-  
րանի «Գիրք որ կոչի Հարանց Վարք», Կ.Պոլ.  
1720—1. «Յիշել... զամենայն միաբան աշ-  
խատաւորս, եւ զբարեմիտ սպասաւորս սուրբ  
տեղեացն այսինքն զՍարգիս Վարդապետ Բէ-  
լեան, զՊետրոս Վ. Եւզոկիացի... որք շրջին ի  
գրուեսն ողորմածաց՝ առ ի հաւաքել զտուրս,  
սակս սուրբ տեղեացն եւ Սուրբ Յակոբայ գա-  
հին...»: Ոմանք կ'անուանեն մեր Սարգիսը  
Թէթերապետ (Մուրատեան Մ. Վ. Պատմ.  
Հայաստ. Եկեղեցւոյ, Եղմ. 1872, էջ 592.  
Գաբր. Պատկանեան, «Արարատ», 1875, էջ  
174) Թէթերապետ առաջնորդութենէն առնելով,  
կամ շփոթելով դար մը յառաջ ապրող